

ԳՏՉԱՎԱՆՔԻ ԾԻՆԱՐԱՐԱՎԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՀԱՐԱԽԱՅԻՆ ԱՐՑԱԽԻ ԵՊԻՍԿՈՊՈՍՈՒԹԵԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ԱԼԵՔՍԱՆ ՅԱԿՈԲԵԱՆ

Նուիրում է Արթուր Սկրտչեանի լուսատու յիշատակին

Գտնաձևանքի համալիրի մէջ մտնող ԺԳ դարի գմբեթաւոր եկեղեցին իր ճարտարապետական յորինուածքով եւ քարգործ վարպետի կատարողական արուեստով միջնադարեան Արցախի առաւել գեղակերտ կառոյցներից մէկն է (Գանձասարի եւ Դադիվանքի տաճարների կողքին): Նոյն վարպետի ձեռքով քանդակուած ու գաւթի ներսում տեղադրուած գտնաձևանքեան երկու խաչքարերն իրենց «պաւղոսեան» նրբագեղութեամբ լաւագոյններն են Արցախում (Դադիվանքի երկու որմնափակ խաչքարերի հետ միասին):

Գմբեթաւոր եկեղեցու ներքուստ հիւսիսային որմին փորագրուած ընդարձակ շինարարական արձանագրութիւնն էլ զարգացած միջնադարի վիմագրութեան մէջ առանձնանում է պատմա-աշխարհագրական չափազանց ծաւալուն տեղեկատուութեամբ: Այն Ամարասից Գտնաձևանք տեղափոխուած հարաւային Արցախի եպիսկոպոսութեան տիրոյթներն ու սահմանները նշող 1246 թուականի մի իւրօրինակ կալուածագիր է, որն իր մանրամասնութեամբ քիչ զուգահեռներ ունի վիմագիր աղբիւրներում:

Դեռեւս 1718 թ. Գտնաձևանքի արձանագրութիւնն արտագրել է Եսայի Հասան-Ջալալեանցը մի տետրակում, որի մէջ նա հաւաքել էր Արցախի մի քանի տասնեակ նշանաւոր վիմագրերը: Այդ չպահպանուած տետրակից երկու ընդօրինակութիւն է կատարուել շուրջ մէկ դար անց՝ Մաշտոցի անուան Մատենադարանի 20 թերթանոց այն ձեռագիրը, որը Գան-

ձասարում 1809 թ. արտագրել է Բաղդասար վարդապետ (հետագայում՝ միտրոպոլիտ) Ջալալեանցը<sup>1</sup>, եւ 13 տարի անց Եսայի Հասան-Ջալալեանցի ձեռագրից կատարուած Յովհաննէս Շահխաթունեանցի ընդօրինակութիւնը<sup>2</sup>:

1842 թ. «Բաթիշայ վանից արձանագիրը» հրատարակել են Յովհ. Շահխաթունեանցը<sup>3</sup> եւ Սարգիս Ջալալեանցը<sup>4</sup>: Դարավերջին «Գտնայ վանքի» մի շարք վիմագրերի հետ միասին «հիւսիսային որմին» արձանագրութիւնը հրատարակել է Մակար Բարխուդարեանցը<sup>5</sup>: 1887 թ. Գտնաձևանքի երկու մեծ վիմագրերը մանրակրկիտ ընթերցել եւ արտագրել է Խաչիկ վարդապետ Դադեանը, որը, ցաւօք, չի հասցրել հրատարակել դրանք<sup>6</sup>:

1960-1964 թթ. Արցախի վիմագրերի հետազոտութեան արշաւախմբի աշխատանքի ընթացքում «Գտնայ վանքի» արձանագրութիւնները վերծանուել են Սեդրակ Բարխուդարեանի կողմից եւ հրատարակուել 1982-ին՝ նորագոյն ուսումնասիրողների համար փոխարինելով ԺԹ դարի ընթերցում-բնագրերին<sup>7</sup>: 1999-2000 թթ. մի քանի այցելութիւնների ընթացքում մենք հնարաւորութիւն ենք ունեցել մօտիկից ընթերցելու, մանրամասն հետազօտելու եւ լուսանկարելու Գտնաձևանքի շինարարական արձանագրութիւնը՝ շրջակայ Տող եւ Տումի գիւղերի բնակիչների սիրալիւր օժանդակութեամբ:

14 տողանոց արձանագրութիւնը փորագրուած է վանական համալիրի գմբեթաւոր եկեղեցու ներսում՝ հիւսիսային, վերելում կամարով աւարտուող պատի

միջին մասում, շարուածքի հինգ (սալա-յատակից հաշուած՝ 10-րդից 6-րդ) շարքերի մտքող երկայնքով: Վերելի 4 շարքերից իւրաքանչիւրի վրայ փորագրուած է 3-ական տող, 5-րդ շարքի վրայ՝ 2 տող: Հեղինակի կողմից իր տեղում բաց թողնուած, չորս բառից բաղկացած մի հատուած փորագրուած է նշուած պատին տրեւելքից յարող աւանդատան ճակատի երեւելքի վրայ, երկու տողով՝ վիմա-գրի 9-րդ եւ 10-րդ տողերի կողքին: Բնագրի առաջին տողի վերելի եզրը սալա-յատակից բարձր է 410 սմ, իսկ վերջին տողի ներքելի եզրը՝ 180 սմ: Տողերի երկարութիւնը ներքելի երեք շարքերում կարուծիւնը ներքելի երկու շարքերում, 314 սմ է, իսկ վերելի երկու շարքերում, որոնք կողքերից կտրուած են կամարի եզրային որմնաեղուստներով՝ 266 սմ:

Ներկայումս եկեղեցու շատ հատուածների նման վնասուած է նաեւ հիւսիսային պատը: Արձանագիր առաջին շարքի հինգ քարերից 2-րդն այժմ ընկած է նոյն պատի տակ, բարեբախտաբար, քան խաթար վիճակում (Ս. Բարխուդարեանի այցելութեան օրերին այն իր տեղում է եղել): Չափազանց ցաւալի է մէջտեղի շարքի (սալայատակից՝ 8-րդ) ձախ կողմի երկու քարերի կորուստը (ենթադրում երկուսի, որովհետեւ 135 սմ երկարութեամբ խորը մեծ է թւում մէկ քարի համար), որոնց վրայ եղել է վիմագրի 7-9-րդ տողերի սկիզբը (շուրջ 2/5-րդը): Քարերն իրենց տեղում են եղել անցեալ դարավերջին, բայց բացակայել են արդէն Ս. Բարխուդարեանի այցելութեան ժամանակ: Շրջակայ բնակիչները ոչինչ չեն յիշում նրանց անհետացման հանգամանքների մասին: Նախորդ ուսումնասիրողների նման մեր երկամեայ փնտրութեան ցաւօք, արդէնք չտուեց ո՛չ Հայաստանի Արցախի թանգարանների պահոցներում, ո՛չ էլ վանքի շրջակայքի անտառում, ո՛չ էլ վանքի շրջակայքի անտառ-

ներում<sup>8</sup>: Կորած քարերի վրայ եղած արձանագրութեան հատուածը հնարաւորինս ճշգրիտ վերականգնելու համար անհրաժեշտ է համեմատական քննութեան ենթարկել ԺԹ դարի ընթերցումները:

Ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, որ Յովհ. Շահխաթունեանցը եւ Սարգիս Ջալալեանցը չեն ընթերցել այս վիմագիրը: Առաջինի տպագրութեան համար հիմք է ծառայել Եսայի Հասան-Ջալալեանցի տետրակից 1822 թ. իր կատարած ընդօրինակութիւնը, որի գլխաւոր տարբերակիչը 1809 թ. ձեռագրից՝ «Խաղինարակիչը 1809 թ. ձեռագրից» բառակապակցութեան բացակայութիւնը, առկայ է Շահխաթունեանցի գրքում: Լրիւ ճշգրտութեան համար անհրաժեշտ է նշել, որ այդտեղ որոշ ընթերցումներ տարբերուած են 1822 թ. ձեռագրից եւ նոյնանում 1809 թ. ձեռագրի ընթերցումների հետ: Դա նշանակում է, որ տպագրի տեքստը պատրաստելիս Յովհ. Շահխաթունեանցը թերեւս հնարաւորութիւն է ունեցել համեմատելու իր ձեռագիրը 1809 թ. գրչագրի հետ: Համեմատութեան արդիւնքում նա փոխառել է վերջինիս որոշ ընթերցումները (օրինակ՝ «ողէ» փխ. 1822-ի «ողե»; «յԱղունայ» փխ. «յԱղունոյ»; «ի Երասխն» փխ. «յԵրախխն»; «Գատուհատի» փխ. «Գետոյհատի»; «Խոզանագետովն» փխ. «Խոզագետովն»; «ա լուծ ու հող» փխ. «մէկ լուծ եւ հող»), սակայն նորից վրիպել (կամ անտեսել) «Խաղինարակ խոտոտեղ»-ի բացը:

Սարգիս Ջալալեանցը եղել է Գտնաձևանքում երկու անգամ<sup>9</sup>: Բացի շինարարական արձանագրութիւնից, նա ընթերցել եւ հրատարակել է եւս հինգ վիմագիր (դրանցից երեքում յիշատակուած է վրթանէս եպիսկոպոսը): Սակայն «Ճանապարհորդութեան» Ա հատորում տպա-



րուագծերը<sup>14</sup>: ԳԱՏԱՀԱՏԻ բառը (ճիշտը՝ ԳԵՏԱՀԱՏԻ) հեռուից ընթերցողին թւում է (քարի փոքրիկ ճեղքուածքի պատճառով), թէ երրորդ Ա-ին առջեւից Վ-ի մասնիկ է կցագրուած: Եթե Դադեանը ընթերցէր «շօշափելով», ապա յստակ կը տեսնէր քարի թերութիւնը եւ չէր ընդօրինակի «գատահմտի»<sup>15</sup>: Եւ, վերջապէս, մէկ դէպքում գիտնականը բնագրի աղճատում է թոյլ տուել՝ ուղղակի դեն նետելով 10-րդ տողի առաջին «իւր կերովն» բառերը (որի պատճառի մասին՝ ստորեւ):

Այսպիսով, կարելի է ամփոփել կորած քարերի վրայ եղած բնագրի վերականգնման նկատառումով կատարուած մեր աղբիւրագիտական անդրադարձը այն եզրայանգմամբ, որ վիմագիրը տեղում ըստ հուսկեան ընթերցել են միայն Եսայի Հասան-Չալալեանցը եւ Խաչիկ Դադեանը: Նրանց թողած բնագրերի համեմատութեամբ էլ պէտք է վերականգնել պակասող տեքստը:

Կորած քարերի առաջին (վիմագրի՝ 7-րդ) տողում Եսայի կաթողիկոսը եւ Խաչիկ վարդապետը ընթերցել են նոյն ձևով «Արքայն Գրիգորիսի, որ է Հաստատեալ...»: Դա էլ առանց կասկածի կարող ենք համարել բնօրինակի տեքստը:

Երկրորդ (վիմագրի՝ 8-րդ) տողում Եսային ունի «Վիճակաւ եւ սահմանով ի յԱղունոյ գե/տոյ...»<sup>16</sup>, իսկ Դադեանը՝ «Վիճակով եւ սահմանաւ ի մաղունո գե/տուն...»: Ո՞ւմ սխալից է առաջացել առաջին բառերի վերջաւորութիւնների տարբերութիւնը. թւում է, թէ տուեալ դէպքում բնագիրը ճիշտ է ընթերցել Եսային: 11-րդ տողում ունենք՝ ԵԿԵՂՅԱՉՈՐ ԻԻՐ ՍԱՀՄԱՆՈՎՆ պահպանուած հատուածը, որի փոխարէն, եթէ ճիշտ լինէր Դադեանը, սպասելի պիտի լինէր ՍԱՀՄԱՆԱԻՆ ձևը: Վերջինիս սխալի

պատճառը, կարծում ենք, եղել է ինքնաթելադրութեան պահին առաջացած շփոթը: Ինչ վերաբերում է գետանուան հատուածին, ապա կարելի է պնդել, որ դժուար թէ Դադեանը չնկատէր ԱՂՈՒՆՈՐ բառից առաջ եղած Յ-ն, եթէ այդպիսին վիմագրում լինէր: Առաւել եւս, որ քիչ անց ունենք՝ «ի Երասխ», ոչ թէ «ի Երասխ», եւ՝ «ի աւազն», ոչ թէ «ի յաւազն»: Վերը ցոյց տուեցինք, որ Մ-ի առկայութիւնն էլ ի նախդիրից յետոյ Ա տառի գոյութեան ապացոյց է, քանի որ միայն նրան կցագրուած Մ կարող էր յիշեցնել քարի որեւէ ճեղքուածքը:

Երրորդ (վիմագրի՝ 9-րդ) տողում Եսայի կաթողիկոսն ունի «Վակունիս վաղազնագետոյ ի Քար/ատնիսն...», իսկ Դադեանը՝ «վակունիսի վաղազնո գետովն, քար/ատնիսն...»: Վերը կատարուած աղբիւրագիտական անդրադարձը թոյլ է տալիս պնդել, որ տուեալ դէպքում առկայ տարբերութիւնն առաւել հաւանական է վերագրել Եսայու «խմբագրական» ընթերցմանը: Նման տիպի վրիպում Խաչիկ վարդապետի մօտ ուղղակի չենք գտնում: Հետեւաբար կարող ենք վերականգնել բնագիրը ըստ վերջինիս՝ միայն փոխելով «Վակունիսի» բառի երկրորդ Ի-ն յաջորդ բառի նախդիրի. «Վակունիս ի վաղազնո գետովն...»:

Աւարտելով պակասող քարերի բնագրի վերականգնումը եւ անցնելով վիմագրի վերծանութեանը՝ որպէս առաջին քայլ՝ պէտք է վերլուծենք նախորդ ընթերցողների թոյլ տուած միեւնոյն սխալը՝ փորագրչի կողմից իր տեղում բաց թողնուած եւ յետոյ «լուսանցքում» աւելացուած չորս բառերի տեղը բնագրի մէջ որոշելու խնդրում: ՀԶԱՐԱԳԵՏՈ ՔՐԴԱԳԵՏ ԻԻՐ // ԿԵՐՈՎՆ երկտողանոց հատուածը գրուած է (քիչ աւելի փոքր տառերով) արձանագրութեան 9-րդ եւ 10-րդ

տողերն իրարից բաժանող քարերի եզրագծի դիմաց: Առաջին տպաւորութեամբ՝ «Հզարագետ...» տողը շարունակում է վիմագրի 9-րդ տողին (ՀԱԿԱՐԻ բառին), իսկ «կերովն»-ը՝ 10-րդ տողին (ԳՈՂԱՆՈՅՆ բառին): Այդպէս է վերծանել Սեդրակ Բարխուդարեանը, իսկ Եսայի կաթողիկոսը եւ Խաչիկ Դադեանը համարել են, որ ՀԱԿԱՐԻ բառին հետեւել են «լուսանցքի» բոլոր չորս բառերը:

Սակայն մօտիկից դիտարկումը պարզ ցոյց է տալիս, որ փորագրողը որեւէ ջանք չի գործադրել աւելացուող տեքստը կոնկրետ տողի ուղղութեանը համադրելու համար: Այդ տառերը գրուած են պարզապէս տուեալ քարի վերեւի եզրի տակ, այդ եզրից նոյնքան ներքեւ, ինչպէս որ բուն արձանագրութեան մէջ է: Միւս կողմից՝ չորս կամ երեք բառերը ՀԱԿԱՐԻ-ից յետոյ դնելով՝ նախորդ վերծանողները դժուարութիւնների առաջ են կանգնել եւ ստիպուած աղճատել բնագրի վերեւի կաթողիկոսի մօտ առաջացել է՝ «Քրդագետ իւր գետովն»<sup>17</sup> իւր սահմանովն<sup>18</sup> ինքնին անբարեհունչ եւ բնագրին ոչ բնորոշ կրկնողութեամբ տեքստը: Սեդրակ Բարխուդարեանը «կերովն»-ը չկրկնելու համար ստացել է «Քրդագետ իւր // գետովն», որի հետեւանքով վերեւի է 10-րդ տողի սկզբի ԻԻՐ-ը: Խաչիկ Դադեանն էլ այստեղ թոյլ է տուել բնագրի միակ աղճատումը՝ ընդհանրապէս անտեսելով 10-րդ տողի սկզբի ԻԻՐ ԿԵՐՈՎՆ-ը:

Մեր ուսումնասիրութիւնից պարզ է դառնում, որ այդ ամէնի փոխարէն անդաժեշտ է «լուսանցքում» աւելացուած չորս բառերը ընթերցել ոչ թէ 9-րդ, այլ 10-րդ տողից յետոյ: Այդպիսով ստացուած է՝ «...ԳՈՂԱՆՈՅՆ // ՀԶԱՐԱԳԵՏՈ, ՔՐԴԱԳԵՏ ԻԻՐ // ԿԵՐՈՎՆ, // ԵԿԵՂՅԱՉՈՐ ԻԻՐ ՍԱՀՄԱՆՈՎՆ...» բնագիրը,

իսկ 9-րդ տողի վերջում եւ 10-րդի սկզբում՝ «...ՀԱԿԱՐԻ // ԻԻՐ ԿԵՐՈՎՆ...»: Մնում է միայն բացատրել, թէ ինչու փորագրողը չի ջանացել աւելացուող բառերը «լուսանցքում» տեղադրել ճշգրիտ նախորդող ԳՈՂԱՆՈՅՆ բառի կողքին: Բայց այդպիսի բացատրութիւնն, ըստ հուսկեան, կարեւոր էլ չէ:

Արձանագրութեան մնացեալ հատուածներում փորագրողը նման մեծ վրիպումներ թոյլ չի տուել: Անկասկած սխալներ են թւում 2-րդ տողի ԻՊԻՍԿՈՊՈՍԲ-ը (փխ. ԵՊԻՍԿՈՊՈՍԲ) եւ 13-րդ տողի ՅԻՇԱՆ-ը (փխ. ԻՇՆԱՆ): Վերջին բառի Յ-ն նոյնպէս աւելորդ է թւում, քանի որ արգելքի շարքի մէջ ունենք՝ ԿԱՄ ԹԱԳԱԻՈՐ եւ ԿԱՄ ՀԱՅՐԱՊԵՏ, առանց Ի նախդիրների: Հետաքրքիր է նաեւ, որ Յ-ից առաջ՝ նախորդող Մ-ի հորիզոնական գծիկի տակ, մի ուղղաձիգ կարճ ստեղն կայ: Հնարաւոր է, որ Խ-ն բաց թողնելուց յետոյ փորագրողը որոշել է յարմար անկիւնում վերականգնել այն, սակայն սկսելուց յետոյ նկատել է ընտրած տեղի սխալը եւ իր մտադրութիւնը կիսատ թողել:

Հաւանական է, որ տառերի բաց թողման արդիւնք են ԵԿԵՂՅԱՉՈՐ (փխ. ԵԿԵՂՅԱՉՈՐ) եւ ՄՈՆԵՆԻՍՆ (փխ. ՄՈՆԵՆԻՍՆ) գրուածքները 11-րդ տողում. սակայն գուցէեւ այդ տեղանունները ժԳ դարում հնչել են առանց Ե-ի եւ Ի-ի: Հետաքրքիր է 13-րդ տողի վերջում «յամէն» բառի գրութիւնը, որն ստացուել է առանց Մ-ի՝ ՅԱԷՆ: 7-րդ տողի վերջում ԳԱԻԱԶԱՆՈՎՍ բառի Ն-ի աջ ստեղնը սխալմամբ բարձրացուած է մինչեւ տողագիծը: 10-րդ տողում երկրորդ ԿԵՐՈՎՆ բառի մէջ փորագրողը Ե-ին Ի է կցագրել, սակայն մոռացել է դա եւ յետոյ նորից առանձին Ի գրել: Անկասկած, ոչ թէ սխալի արդիւնք, այլ գրելատեղի (թերեւս

ընդհանրապես վիճաբեր գրչութեան) առանձնայատկութիւն է բառավերջի կամ զոյգ ձայնաւորների միջեւ կիսաձայն Թն չգրելը (ՈՐԴՈ, ԱՄԱՐԱՍԱ, ԱՂՈՒՆՈ ԳԵՏՈ, ՎԱՂԱԶՆՈ, ԴԻԶԱԿՈ, ՀԶԱՐԱԳԵՏՈ, ԼԾՈ, ԽՈՏՈ, ՅՈՒԴԱԻ, ԿԱԵՆ):

Որոշ դէպքերում փորագրողը, իր սխալը նկատելով, փորձել է ուղղել այն: 4-րդ տողում ՎՐԹԱՆԷՍ բառի մէջ նա Թ-ի փոխարէն սկսել է գրել յաջորդ Ա տառը, սակայն, ժամանակին նկատելով դա, նրա աջ ստեղնը դարձրել է Թ-ի սիւնակ (իսկ առաջին ստեղնը մնացել է ու դարձել Եսայի կաթողիկոսի համար «Վարդան» կարգալու պատճառ): 8-րդ տողում ԳԵՏԱՀԱՏԻ բառի Ե-ի փոխարէն փորագրողը սկզբում գրել է Ա, որի երկու աջ սեպիկներն էլ յստակ երեւում են: Սակայն յետոյ դա համարել է սխալ եւ Ե-ի աւելի խոր աջ ստեղն ու հորիզոնական գծիկ է փորել Ա-ի աջ ստեղնի վրայ, ապա, դրանով էլ չբաւարարուելով, հորիզոնական գծիկին զուգահեռ եւս երկու գծիկ է փորել (առանց սեպիկների), գուցէ, երեք գծիկներով Ե-ն յստակեցնելու համար<sup>19</sup>: Իհարկէ, լրիւ չենք կարող բացատրել նաեւ հակառակը, բայց դա կարելի է ճշտել միայն Գնտահատ կամ Գատահատ տեղանուն քննութեան կամ մի ուրիշ վկայութեան յայտնաբերման դէպքում:

Նշենք նաեւ, որ փորագրողը երբեմն, ինչպէս ընդունուած է վիճագրութեան մէջ, շրջանցել է քարի ճեղքուածքները: Դրա հետեւանքով որոշ դատարկ տեղեր հեռուից տառի են նմանում: Այդպէս սխալուել է, օրինակ, Սեդրակ Բարխուդարեանը, երբ ԳԵՏԱՀԱՏԻ (տարբ. ԳԱՏԱՀԱՏԻ) բառի մէջ Հ եւ Վ է ընթերցել (ԳԱՀՏԱՀՎԱՏԻ)<sup>20</sup>:

Արձանագրութեան մէջ կցագրումները փոքրաթիւ են. երկուսից աւելի տառի

կցագրման դէպք չունենք: Սովորական են Ո-Ր եւ Ա-Թ կցագրերը, մէկ դէպքում կցագիր է տրուած վերջին տողի վերջին ետեւ: Խնամքով փորագրուած են բոլոր պատուոյ նշանները յապաւուած բառերի եւ վերջաւորութիւնների վերեւում, թուականները երկու կողմից անջատուած են կրկնակէտերով: Շատ ուրիշ ընդարձակ վիճագրերի համեմատութեամբ Գտչաւանքի արձանագրութիւնը ընդհանուր առմամբ աչքի է ընկնում հեղինակի որդեգրած գրելաոճի եւ քերականական կանոնների հետեւողական պահպանութեամբ:

Արձանագրութեան վերծանութիւնը ներկայացնում ենք՝ հնարաւորինս պահպանելով հեղինակի գրելաոճի առանձնայատկութիւնները, բացելով յապաւուածները, աւելացնելով միայն կէտադրութիւնը եւ ակնյայտ վրիպակները.

1. ԹԱՆՈՒՆ Ա(ՍՏՈՒԾՈ)Թ, ՀԱԻՐ ԵՒ ՈՐԴՈ ԵՒ Ս(ՈՒՐ)Բ ՀՈԳՈՅՆ, ԵՄ Տ(Է)Ր ՍԱՐԳԻՍ ԵՒ Տ(Է)Ր ՎՐԹԱՆԷՍ,
2. ԱՄԱՐԱՍԱ ԻՊԻՍԿՈՊՈՍԲ, ՀԻՄԵՆՑԱՔ ԶԵԿԵՂԵՑԻՍ Ի ԹՎԻՍ :ՈՂ: [1241]: ՇԱՏ ԱՇ-
3. ԽԱՏՈՒԹ(ԵԱՄ)Բ ԻՆՉ ԶԱԻԱԳ ԽՈՐԱՆՆ ԽՓԵՑԱԻ, ԵՂԲԱՅՐ ԻՄ Տ(Է)Ր ՍԱՐԳԻՍ Ի Ք(ՐԻՍՏՈ)Ս ՓՈԽ-
4. ԵՑԱԻ: ԵՄ Տ(Է)Ր ՎՐԹԱՆԷՍ, ԿԱՏԱՐԵՑԻ ԲԱԶՈՒՄ ԱՇԽԱՏՈՒԹ(ԵԱՄ)Բ Ի ՄԵՐ ՀԱԼ-
5. ԱԼ ԱՐԴԻԻՆԻՑ, Ի :ՈՂԵ: [1246] ԹՎԻՍ, Ի ԴԱՌՆ ԵՒ ՆԵՂ ԺԱՄԱՆԱԿԻ ԹԱԶԳԷՆ ՆԵՏՈՂԱՑ,
6. ՈՐ ԶԲԱԶՈՒՄ ԳԱԻԱՌՍ ԱԻԵՐԵԱՑ, ԵՒ ՄՆԱՑ ԱՅԼԱՍԵՆՈՒՑՆ ԱԹՈՒՍ ԵՒ ՎԻՃԱԿՍ

7. [ՍՐԲՈՅ ԳՐԻԳՈՐԻՍԻ, ՈՐ Է ՀԱՍՏԱՏԵԱ]Լ Ս(ՈՒՐ)Բ ՆՇԱՆԱԻՍ ԵՒ Ս(ՈՒՐ)Բ ԱԶՈՎՆ ԵՒ ԳԱԻԱԶԱՆՈՎՍ,
8. [ՎԻՇԱԿԱԻ ԵՒ ՍԱՀՄԱՆՈՎ Ի ԱՂՈՒՆՈ ԳԵ]ՏՈ ԻՆՉՈՒ Ի ԵՐԱՍԽ, ԻՆՉՈՒ Ի ԱԻԱԶՆ ԳԵՏԱՀԱՏԻ,
9. [ՎԱԿՈՒՆԻՍ Ի ՎԱՂԱԶՆՈ ԳԵՏՈՎՆ, ՔԱՐԱ]ՏԵԻՍԵ ԽՈԶԱԲԵՐԴՈՎ, ԶԱՌԻՍՏ ԻՒՐ ԿԵՐՈՎ, ՀԱԿԱՐԻ
10. ԻՒՐ ԿԵՐՈՎՆ, ԴԻԶԱԿՈ ԲԷԼՈՒԿԱՆ ԻՒՐ ԿԵՐՈՎՆ՝ ՀԱՅՐԵՆԻՔ ԵԿԵՂԵՑՈՅՍ ՓԱՐԱԽՆ, ԳՈԴԱՆՈՑՆ
- 10ա. ՀԶԱՐԱԳԵՏՈ, ՔՐԴԱԳԵՏ ԻՒՐ
- 10բ. ԿԵՐՈՎՆ,
11. ԵԿԵՂԵՑՈՐ ԻՒՐ ՍԱՀՄԱՆՈՎՆ, :Ա: ԼԾՈ ՀՈՂ Ի ՏԱՀԻՍ, :Ա: ԼԾՈ Ի ՏՈՂ, :Ա: Ի ԳԱՔՍ, :Ա: Ի ՄՈՒԵՆ-
12. ԻՍԵ, ԽԱԶԻՆԱՄԱՐԳ՝ ԽՈՏՈ ՏԵՂ: ՈՐ ԹԱՅՍ ՎԻՃԱԿԷՍ ԵՒ Ի ՍԱՀՄԱՆԷՍ Ի ԹԵՏ ՈՒՆԻ՝ ԿԱՄ ԹԱԳԱՒՈՐ,
13. ԿԱՄ ԹԻՇ[Խ]ԱՆ, ԿԱՄ ՀԱՅՐԱՊԵՏ, :Գ: Ս(ՈՒՐ)Բ ԺՈՂՈՎՈՅՆ ՆՉՈՎԵԱԼ ԵՂԻՑԻ, ԹԱ(ՍՏՈՒԾՈ)Թ ԵՒ ԹԱ[Մ]ԷՆ ՍՐԲՈ-
14. ԱՆԻԾԵԱԼ ԵՂԻՑԻ, ՄԱՍԵ ԵՒ ԲԱԺԻՆ ԸՆԴ ԹՈՒԴԱԻ ԵՒ ԸՆԴ ԽԱԶԵՑՈՂՍԵ ԵՂԻՑԻ ԵՒ ԸՆԴ ԿԱԵՆ:

Գտչաւանքի շինարարական արձանագրութեան պարունակած տեղանունների քննարկումը կը կատարենք բնագրում առկայ հերթականութեամբ՝ վերապահում տանք այն մասին, որ ներկայ աշխատանքում հնարաւոր չէ կատարելապէս ամփոփել նրանց մասին եղած ամբողջ գրականութիւնը:

1. ԱՄԱՐԱՍԱՑ ԻՊԻՍԿՈՊՈՍԲ. Ամասի եպիսկոպոսական թեմը, ինչպէս ե-

րեւում է նախ եւ առաջ հէնց մեր արձանագրութիւնից, ամփոփել է Արցախի ողջ հարաւային մասը: Աւանդաբար համարուած է հիմնադրուած Գրիգոր Լուսաւորչի թոռան՝ Բուն Աղուանքի եպիսկոպոս Գրիգորիսի կողմից, ինչպէս պնդում է նաեւ մեր վիճագրի հեղինակը: Իրականում վաղ շրջանի աղբիւրներից յայտնի է միայն, որ մասքութեան երկրի Վատնեան դաշտում Գրիգորիսի նահատակուելուց յետոյ նրա մարմինը բերուել եւ ամփոփուել է Հաբանդ գաւառի Ամարաս աւանում<sup>21</sup>: Յենուելով Ժ դարի պատմիչ Մովսէս Դասխուրանցու (կոչուած նաեւ Կաղանկատուացի) «Աղուանից Պատմութեան» մէջ պահպանուած Զ դարի աղբիւր «Վաչագանի վէպի» մի վկայութեան վրայ («ընդ այն ժամանակ եպիսկոպոս ոչ կայր յԱմարաս»)՝ ժամանակին ենթադրել ենք, որ Ամարասի եպիսկոպոսութիւնը ստեղծուել է Ե դարի աւարտից յետոյ<sup>23</sup>, թէպէտ աւանդութիւնները նրա գոյութեան մասին խօսում են աւելի վաղ ժամանակի հետ կապուած<sup>24</sup>:

Պատմագրութիւնը դեռեւս պէտք է պատասխանի այն հարցին, թէ ինչպիսի վարչական կամ աւատական հանգամանքներ են նպաստել Արցախի հարաւային մասը մնացեալ նահանգից առանձնացնող եպիսկոպոսական թեմական միաւորի ձեւաւորմանը (ըստ Բարկէն Յարութիւնեանի վեր հանած մեթոդաբանութեան)<sup>25</sup>: Չյաւակնելով վերջնական եզրակացութեան եւ վերապահում անելով «Աշխարհացոյցի» քննական բնագրի բացակայութեան պատճառով մեծ սխալի հնարաւորութեան մասին՝ այստեղ այնուամենայնիւ նշենք, որ այդ երկի երկու թուարկումներում (Բուն Աղուանքի եւ Մեծ Հայքի գաւառների) Արցախի կենտրոնական եւ հարաւային գաւառների հերթականութիւնը որոշակի տարբերու-

թիւն է դրսեւորում: Մեծ Հայքի Արցախ աշխարհի նկարագրութեան մէջ հերթականութիւնը խառն է. «Միւս Հարանդ, Վակունք, Բերձոր, Մեծիրանք, Մեծկուանք, Հարճլանք, Մոխսանք, Պիանք, Պածկանք, Սիսական ուտանան...» (պարզեցրել ենք տարրնթերցումները եւ շղագիր տուել հետագայում Դիզակի իշխանութեան մէջ ընդգրկուած հարաւային գաւառները)<sup>26</sup>: Իսկ Բուն Աղուանքի նկարագրութեան մէջ, որն արձանագրում է 428 թ. յետոյ առաջ եկած վիճակը, այդ գաւառներն առանձնացուած են իրարից. «... եւ այլ գաւառք, գոր ի Հայոց հանեալ է. ... Մեծ Կուանք, Մեծ Իրանք, Պիանք, Հարճլանք, Պածկանք, Մոխսանք, Վակունք, Փոքր Հարանդ, Սիսական-ոտուստակ, Բերձոր, [Տրի], Ասոտ»<sup>27</sup>:

2. Ի ԱՂՈՒՆՈՒ ԳԵՏՈՒ. Աղուանոյ-Աղուանոյ գետանունը յիշատակում է դեռեւս «Աշխարհացոյցում». «Աշխարհ Սիւնիք, ընդ մէջ կալով Երասխայ եւ Արձախայ, ... մինչեւ ցնակորդեան քաղաք, անցն իւր հոմանուն գետովք, եւ Աղաւնոյ գետ»<sup>28</sup>: «Սիւնեաց Պատմութիւնը» հաստատում է, որ Աղուանոյ գետով է անցել Սիւնիք եւ Արցախ նահանգների սահմանագիծը. «Հատանէ եւ զսահման Աղուանից ընթեր խոռն, Ծար գաւառ, Աղազէճ, ընդ որ Աղուանոյ գետն հատանէ մինչ ի Քարաւազին կամուրջն եւ Հաբանդ գաւառ...»<sup>29</sup>:

Դեռեւս ժ դարում Աղաւնոյ գետը կոչուել է նաեւ Հակարի, որը պահպանուել է մինչեւ այսօր (տարբերակներ՝ «Ագար», «Աքերայ», «Հագարու»): «Սիւնեաց պատմութիւնը» նկարագրում է Սմբատ եւ Սահակ Սիւնեաց իշխանների տիրոջթնների սահմանները այսպէս. «Սմբատ զաւագագոյն մասն Սիւնեաց ընդ արեւմուտս կողմն եւ զբոլոր Վայոց ձորն ունէր ի բաժնի, իսկ Սահակ՝ ընդ ա-

րեւելս մինչ ի Հակարի»<sup>30</sup>:

3. ԻՆՉՈՒ Ի ԵՐԱՍՈՒ. Արցախի ամենահարաւային գաւառը, որը ձգուում էր Արցախեան լեռնաշղթայի Դիզակայտի լեռնազանգուածից մինչեւ Արաքս գետի ափերը, «Աշխարհացոյցի» Սիսական-ի Կոտակն է, որն «Աղուանից Պատմութեան» մէջ կոչուում է Սիսան կամ Սիսական: Մովսէս Դասխուրանցին թ դարի 40-ական թուականներին բայլականցիներ ի մի աւարառութեան մասին պատմում է այսպէս. «... եկին, հասին բաղականացիքն եւ արարին վնաս Սիսան, Տրւոյ եւ Ամարաս գաւառաց: Եւ ել Եսայի անուանեալն Աբու Մուսէ ի վերայ նոցա եւ կոտորեաց զնոսա»<sup>31</sup>: Միւս տեղեկութիւնը, փաստօրէն, Դիզակի իշխանութեան գաւառների թուարկումն է. «Վերին Վայկունիք, Բերձոր, Սիսական, Հաբանդ, Ամարաս, Պազկանք, Մխանք եւ Տրի գաւառ»<sup>32</sup>: Դրանց համադրութիւնից երեւում է, որ Սիսան-Սիսական (ի Կոտակ) գաւառը պէտք է տեղադրել Հակարի գետի եւ Հազրութի գետակի ստորին հոսանքների միջեւ<sup>33</sup>: Նրանից հիւսիս-արեւմուտք (Փոքր Ակերայ գետակից այն կողմ), ընկնում էր Բերձոր գաւառը, ուղիղ գծով դէպի հիւսիս (Դիզակայտի լեռնազանգուածից այն կողմ)՝ Միւս Հաբանդը, իսկ դէպի հիւսիս-արեւելք (Հազրութի գետակից այն կողմ)՝ Ուտիքի Տրի գաւառը:

4. ԻՆՉՈՒ Ի ԱԻԱԶՆ ԳԵՏԱՀԱՏԻ (տարբ. ԳԱՏԱՀԱՏԻ). Գետահատի (կամ Գատահատի) գետանցը («աւազը») Երասխ գետի վրայ այլ աղբիւրներում չի յիշատակում: Պատմիչներից յայտնի են Նակորգանի գետանցը Սիւնիքի Միւս Բաղք կամ Քաշունիք գաւառում եւ Քարաւազի գետանցը, որը գտնուել է Աղաւնոյ-Հակարիի գետաբերանի շրջանում<sup>34</sup>: Կարելի է մտածել, որ Գետահատի «աւա-

զը» համապատասխանում է Ասլանդուզի կամ Խորադիզի գետանցին: Հաւանական է թւում, որ ոչ թէ Խուրափերինի կամըղով, այլ հէնց այստեղով էին անցնում Իրանից Արցախ թափանցող աւարառուները («... էանց Բաբան գգետովն Երասխ ի Պարսից յայս կողմն եւ յԱմարաս գաւառ բնակեցաւ»)<sup>35</sup>:

Անուան ստուգաբանութիւնը աւելի հեշտ կը լինէր «Գետահատ» տարբերակի դէպքում, որը, ինչպէս նշեցինք, սկզբում դրիպել, այնուհետեւ խոր փորել է Գոչավանքի վիճակի հեղինակը: Ասլանդուզի գետանցի շրջանում Երասխից սկսուում, «Հատուում» են երկու հինաւուրց եւ բաւականին մեծ ջրանցքներ, որոնցից առաւել յայտնի ձախափնեայ Գեաւուրարիւ ձգուում է դէպի հիւսիս մինչեւ Կարկառի ստորին հոսանքի շրջանը:

«Գետահատ» տարբերակը ընդունելու եւ այն Ասլանդուզի գետանցի հետ համադրելու դէպքում չափազանց հրապուժաւորելու դէպքում չափազանց հրապուժաւորելու դէպքում նաեւ նրա համադրումը ընդ է թւում նաեւ նրա համադրումը «Հադրոյ» տեղանուն հետ, որը ժԵ-ժԹ դարերում աւելի յայտնի էր զուգահեռ «Հատրութ» (անգամ՝ «Հատրուդ») գրութեամբ<sup>36</sup>: Նշենք, որ Հազրութի գետակը Արաքսի մէջ է թափուում հէնց Խորադիզի գետանցի մօտ: Մասնագէտները հակուած են Հադրոյ տեղանունը ստուգաբանել «իրանական hadd-e rud («գետապատուար», «գետեզր», «գետափ», «գետաբերան») արտայայտութիւնից»<sup>37</sup>, որի տարբերակը՝ «հատը» է արաբերէն առաջին բաղադրիչը ծագում է արաբերէն «հադ» բառից («սահման»), իսկ «ուդ»՝ «ուդ» բառը իրանական լեզուներում նշանակում է «գետ»: Սակայն այժմ ակնառու է նաեւ, որ Հայերէն «գետահատ» բառակապակցութիւնը իրանական լեզուի բառացի ընկալմամբ դառնալու էր «հատ-ե-ուդ», որից էլ ունենք «Հադրութ»: Ըստ այսմ՝ հաւանական է, որ գե-

տանցի «Գետահատ» անուան իրանական յորըըղումից է առաջացել մօտակայ գետանունը, որն էլ այնուհետեւ անցել է վերնահոլտում գտնուող բնակավայրին:

5. ՎԱԿՈՒՆԻՍ Ի ՎԱՂԱԶՆՈՒ ԳԵՏՈՒՎՆ. Վակունիս բնակավայրի եւ գաւառի (նաեւ՝ Վակունիք, Վերին Վայկունիք) տեղադրութիւնը ճշտելու համար օգնում է հէնց Վաղազնոյ գետի տեղորոշումը: Գետանունը չի պահպանուել, սակայն այսօր էլ շէն Վաղազին գիւղի գոյութիւնը Հակարիի Շալուայ եւ Նաղդայութիւնը Վակարիի Շալուայ եւ Նաղդայութիւնը գետաբերանի մօտակայքում, Քաշաթաղի շրջանի Բերձոր քաղաքից շուրջ 30 կմ հիւսիս, ցոյց է տալիս, որ այդ հոլտում էլ եղել են Վաղազին գետը եւ Վակունիս բնակավայրը: Այդպիսի տեղադրութեանը յարմարում է նաեւ Դիզակի իշխանութեան գաւառների վերը բերուած թուարկման յաջորդականութիւնը՝ «Վերին Վայկունիք, Բերձոր, Սիսական...»: Պատմագրութեան մէջ բաւականին տարածում է գտել մի թիւրքնակալում, համաձայն որի Վայկունիք գաւառը տարւում է Թարթառ գետի վերնահոլտ, ուր ըստ «Աղուանից Պատմութեան» մի դրուագի՝ գտնուել է Վայունիք գիւղը («Ատրնեբսեհ շինէ զբերդն Հանդու եւ զպարանս իւր եղեալ ի գիւղն, որ կոչի Վայունիք, ուր եւ բաղանիք արքունական են»<sup>38</sup>): Սակայն մեր արձանագրութիւնը եւ Դիզակի գաւառների քարտեզագրումը ստիպում են բացառել կապը Ջերմաշուր-Վայունիք (Իստիսու) բնակավայրի եւ Վայկունիք գաւառի միջեւ<sup>39</sup>:

Ինչ վերաբերում է Վակունիս բնակավայրին, ապա մեզ ամէնից հաւանական է թւում նրա համադրումը ժԹ դարից Բշառն անունով յայտնի գիւղի հետ, որը գտնուում է Շալուայի եւ Նաղդալի գետաբերանի վերեւում բարձրացող սարա-





րից երեւում է, որ «խոտոտեղ» տերմինն առաւելապէս գետափերի մարգագետնային խոտհարք է նշանակում. «Իսկ խոտափերին են սոքա. Ղազարկապան՝ Քարահունջի գետէն մինչ ի ծակն...: Կեռամբալասքէն մինչ ի գետն»<sup>71</sup>: Ըստ այսմ՝ Խազինամարգը կարելի է փնտրել մօտաւորապէս Հաբանդից Տրի հոսող գետերից մէկի միջնահովտում:

Այսպիսով, վիճաբերի տեղանունների քարտեզագրումը ծածկում է հարաւային Արցախի գաւառների տարածքի մեծ մասը, այն է՝ Վալուցնիք գաւառը (Վալուցնիս եւ Վաղազնոյ գետ)՝ Բերձորը (Հակարի, Քարատնիս, Խոզաբերդ, Եկեղցածոր, որոշ հաւանականութեամբ՝ Զառիստ, եթէ այն Զերտին է<sup>72</sup>); Սիսական-ի կոտակը («Ինչու ի Երասխ»); Հաբանդը (Տահիս, Տող, Գաք, Մոխենիս, որոշ հաւանականութեամբ՝ Քրդագետ); Ամարասը, որն «Աշխարհացոյցում» Միւս Հաբանդի մի մասն էր<sup>73</sup> (Ամարաս, որոշ հաւանականութեամբ՝ Գողանոց եւ Հզարագետ); Ինչպէս նաեւ Ուտիք աշխարհի Տրի գաւառը (Դիզակո Բէլուկան):

Որոշ տեղանունների ճշգրիտ տեղորոշման անհնարին լինելը (Քրդագետ, Գողանոց, Խազինամարգ, Հզարագետ) ստիպում է առայժմ բաւարարուել ընդհանուր պատկերով՝ խոտափերով մի շարք հարցադրումներից: Օրինակ՝ թէ Ինչու ընդգրկուած է են կալուածքներ Մուխանք եւ Պազկանք գաւառներում: Իհարկէ, հնարաւոր է, որ այդ գաւառներում ուրիշ եպիսկոպոսութեան իրաւագորութիւն է գործել: Նկատի ունենք Բուի եղցու ԺԳ դարի թուագրութիւն ունեցող արձանագրութիւններում մի քանի անգամ եպիսկոպոսութեան յիշատակումը առանց Ամարաս նշելու<sup>74</sup>: Բայց այդ ընդհանուր պատկերն էլ բաւական է երկու կարեւոր եզրակացութեան յանգելու հա-

մար: Առաջին՝ Գոչապլանք տեղափոխուած Ամարասի եպիսկոպոսութիւնը առնուազն յաւակնում է ողջ հարաւային Արցախի տարածքի նկատմամբ թեմական իրաւագորութիւն ունենալու: Երկրորդ՝ ԺԳ դարի կէսերին այդ եպիսկոպոսութեան ծաղկումը, յանձին Գոչապլանքի հողակերտ եկեղեցու կառուցման եւ արտակարգ բարձր որակի զարդանախշման, ինչպէս նաեւ՝ մեծածաւալ նուիրատուութիւնների<sup>75</sup>, հասնում է իր բարձրակէտին:

Յաւել սրտի, եպիսկոպոսութեան ծաղկման շրջանը ԺԳ դարի կէսերին նոյնպէս երկար չտեւեց: Մէկ տասնամեակ անց վրայ հասաւ աղբիւրներից մեզ անյայտ արհաւիրքը, որի հետեւանքով Վրթանէս եպիսկոպոսը ստիպուած էր նորից վտարանդի դառնալ եւ հեռանալ հիւսիս՝ աւելի ամուր հայկական շրջաններ: Ի վերջոյ, նա վախճանուեց այդքան փայփայած իր «հայրենիքից» հեռու՝ Խազարավանքում, որտեղ մինչեւ այժմ պահպանուած նրա տապանաքարին հինգ տողով գրուած է. «ԱՅՍ Է ՀԱՆԳ/ԻՍՏ ՏԷՐ ՎՐԴ/ԱՆԻՍԻՒՒ ԱՄԱՐ/ԱՍԱ ԵՊԻՍԿ/ՈՊՈՍԻ: Թ :ՁԸ: [1259]»<sup>76</sup>:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- 1 Ձեռագրի յիշատակարանն է. «Ի ՌՄԾԸ [1809] թուին Հայոց, ի Սուրբ Աթոռս Գանձասարու վերստին նորոգեցաւ արձաններս ի հին օրինակէ ձեռամբ Բաղդասար վարդապետի Զալալեան եւ որդւոց Դանիէլ Քազարապետին՝ Տեառն Խաչեան» (ՄՄ, N 7821, թ. 18ա: «Բթշա վանից» արձանագրութիւնը՝ թ. 8ա-բ):
- 2 Յիշատակարանն է. «Յամի տեսն 1822. յամսեանն յուլիսի մէկին ընդ սրբազնակատար Եփրեմ կաթողիկոսին մինչ էար ի Գանձասար հրաշալի վանս, տեսի գրագում վանորեից, եկեղեցեաց եւ խաչից հնագոյն արձանաց օրինակս՝ ժողովեալս ի միում հին տետր ձեռամբ Եփայի կաթողիկոսին Աղուանից ի թուականութեանն Հայոց ՌԵԿԷ [ 1718 ], գոր եւ օրինակեցի կրկին իմով ձեռամբ. ի. ծ. Յօհաննէս եպիսկոպոս, երբեմն գրագիր Սուրբ Էջմիածնի » (ՄՄ, N 9923, թ. 2ա: «Բարթշալ վանից» արձանագրութիւնը՝ թ. 11ա):
- 3 Ստորագրութիւն կաթողիկէ Էջմիածնի եւ հինգ գաւառացն Արարատայ. Աշխատասիրութեամբ

- 1 Յովհաննու եպիսկոպոսի Ծախիսթումեանց Ծահրիարեցոյ, միաբանի Սրբոյ Էջմիածնի, բաժանեալ յերկուս հատորս, հ. Բ, Ա. Էջմիածնի, 1842, էջ 366-367:
- 4 Ծանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան. Աշխատասիրութեամբ Սարգիս վարդապետի Զալալեանց, միաբանի վանաց Սանահնի ի 1841-մի, մասն Ա, Տփլիսի, 1842, էջ 209-210:
- 5 Մակար եպիսկոպոս Բարխուտարեանց, Արցախ, Բաքու, 1895, էջ 80-81:
- 6 Դադեանի՝ Դիզակի պատմութեանն ու աշխարհագրութեանը վերաբերող մատենագրական տեղեկութիւններ եւ վիճաբեր պարունակող տետրակը գտնուում է Հայաստանի Պատմութեան պետական կենտրոնական արխիւում ( ֆոնդ 319, ցուց. 1, գործ 107, թերթ 21բ-22ա ):
- 7 Դիւան հայ վիճագրութեան, պրակ V, Արցախ, Կազմեց Ա. Գ. Բարխուտարեանը, Երեւան, 1982, էջ 182-183:
- 8 Առաւել հաւանական է ենթադրել, որ կորած քարերը ինչ-որ անհասկանալի տրամաբանութեամբ պոկուել ու հետագուել են եկեղեցոց 20-30-ական թուերին, երբ ամէնոր բարբարոսաբար քանդուում էին սրբավայրերը կամ պոկուում էին նրանց պատկող խաչերը: Գոչապլանքի խաչի կործանման ու նրա հետագայ ճակատագրի մասին տողեցիների ու տումեցիների յիշողութեան մէջ նույնպէս ոչինչ չի պահպանուել:
- 9 Տե՛ս Ա. Զալալեանց, նշ. աշխ., հ. Բ, էջ 257-258:
- 10 «Գետահատի» ընթերցման հնարատրութեան մասին տե՛ս ստորեւ:
- 11 Մ. Բարխուտարեանց, նշ. աշխ., էջ 80-82:
- 12 Նոյն տեղում, էջ 81: Հմմտ. Դիւան հայ վիճագրութեան, պրակ V, էջ 183:
- 13 Այն, որ «Բարդազետ» կայ նաեւ Ա. Զալալեանցի մօտ, գուտ պատահականութեան հետեւանք է:
- 14 Եսայի կաթողիկոսը այդ բառը կարդացել էր «Խոզագետով» (ըստ 1822 թ. ընդօրինակութեան. 1809 թ. ձեռագրի գրիչը բառը դարձրել էր «Խոզանագետով»):
- 15 Նոյն պիսալը հետագայում կատարել է նաեւ Ա. Բարխուտարեանը: Եսայի կաթողիկոսը տուեալ դէպքում աւելի ուշադիր է եղել:
- 16 «Վիճակաւ» բնագիրը մեծը վերականգնում ենք 1809 եւ 1822 թթ. ձեռագրերի համեմատութեամբ: Առաջինն ունի «Վիճաւ և և սահմանով» փոքր-ինչ աղանատուած ձեւը (Սարգիս Զալալեանցի մօտ՝ «Վիճակաւ»), իսկ երկրորդը՝ «Վիճակեցաւ եւ սահմանով»: Թուում է, թէ առաջին ընթերցումը չէր կարող առաջանալ «Վիճակեցաւ»-ից, այնպէս չէր կարող կարող էր տեղեկուել «Վիճակաւ»-ից՝ կոտեց կարող էր տեղեկուել «Վիճակաւ»-ից իմաստով ընկալելու արդիւնքում:
- 17 Եսային զարմանալի հետեւողականութեամբ ընթերցել է «գետով» (մի դէպքում էլ՝ «սահմանով»):
- 18 Իրականում 10-րդ տողն սկսւում է ոչ թէ «իւր

- 1 սահմանով», այլ «իւր կերով» բառերով, որտեղ կԵՐ հատուածը մաշուած է, սակայն մօտիկից ընթերցում է շատ որոշակի: Ա. Բարխուտարեանը առաջարկում է կարդալ «իւր գետով», ուր, սակայն, չկրկնուող բնագիր ստանալու չափողում (մի իհր-ի անտեսման պատճառով) փորձի հետեւանք է:
- 19 Ն. Դադեանը եւ Ա. Բարխուտարեանը նախընտրել են այդ տառը Ա ընթերցել, իսկ Եսայի կաթողիկոսը բառը կարդացել է, հաւանաբար, «գետահատի» (որը վերականգնում ենք 1809 թ. եւ 1822 թ. արտագրութիւնների համեմատութեամբ. առաջինում՝ «գտտտտտի», երկրորդում՝ «գետոյհատի»):
- 20 Վիճագրագետը սխալուել է նաեւ՝ Գ.Ա.ՎԱԶԱՆՈՎՍ, ՀԶԱՐԱԳԵՏՈՎ, ԳՈՏԱՆՈՑՆ, ԽԱՉԻՆԱՄԱՐԳ ընթերցելով, ԽՈՑԱԲԵՐԴՈՎՆ ընթերցումը պատճառով վերականգնել է ԽՈՑԱԳԵՏՈՎ, ԿԵՐՈՎՆ-ը՝ ԳԵՏՈՎՆ (10-րդ տողում), ինչպէս նաեւ վրիպել Ի (8-րդ տող) եւ ՅՈՒԴԱԻ ԵՒ ԸՆԴ (14-րդ տող) բառերը:
- 21 Փաստոս Բուզանդ, դպր. Գ, գլ. Ե-Զ, էջ 14 («Եւ ապա բարձին գնա, որք ընդ նմա երթեալ էին ի գաւառէն Հաբանդայ, եւ բերին ի գաւառն իւրեանց ի կողմանց Աղուանից ի սահմանս Հայոց ի Հաբանդ, ի գետն՝ որ անուանեալ կոչի Ամարագ: Եւ եղին գնա առ եկեղեցեան, գոր շինեալ էր առաջնոյն մեծին Գրիգորի, հատում Գրիգորիսի՝ քահանայապետին մեծի աշխարհին Հայաստան երկրին»); Խորենացի, գիրք Գ, գլ. Գ, էջ 260 («Ձոր բարձեալ սարկաւազաց նորին, բերելով ի Փոքր Սիւնիս, թաղեցին յԱմարաս աւանի»): Աղբիւրագիտական քննութիւնը տե՛ս Ա. Ա. ԱԿՈՊԻԱՆ. «История Армении» Фавста Бузанда как источник «Повести о Вачагане» (снова о первом и втором дпругонах Фавста Бузанда). - «Кавказ и Византия», вып. 5, Ереван, 1987, էջ 74-75:
- 22 Օգտագործում ենք «Աղուանից պատմութեան» վարագ Առաքելեանի հրատարակութիւնը (Երեւան, 1983), (պատմեալեա՛ ԱՊ), գիրք Ա, գլ. ԻԱ, էջ 74-75:
- 23 Ա. Ա. ԱԿՈՊԻԱՆ. Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках. Ереван, 1987, էջ 130:
- 24 ԱՊ, գիրք Բ, գլ. Ե, էջ 119 («Ի ժամանակս Վաչագանայ Աղուանից արքայի եւ Գառնիկայ Ամարասայ եպիսկոպոսի»):
- 25 Բարկէն Յարութիւնեան, Հայոց եկեղեցու թեմական բաժանումը Գրիգոր Լուսաւորչի հովուապետութեան շրջանում. - «Պատմա-բանասիրական հանդէս», 2000, N 2, էջ 108-127:
- 26 Աշխարհացոյց Մովսէսի Խորենացոյ, Յաւելուածովք նախնեաց, Վեներիկ, 1881, էջ 33; Армянская география VII века по Р. X. Текст и перевод издал К. П. Патканов, СПб., 1877, էջ 19; Ա. Գ. Արրահամեան, Անամիա Օիրակացու մատենագրութիւնը, Երեւան 1944, էջ 350:
- 27 Ա. Գ. Արրահամեան, Անամիա Օիրակացու մա-

տեմագրությունը, էջ 348 (վերջին գաւառանունը, անկախած, Ուտիք աշխարհի Առանոտն է, որից առաջ, հաւանաբար, պէտք է լինէր գրչի կողմից բաց թողնուած Տրի գաւառանունը):

28 Աշխարհացոյց Մովսէսի Խորենացոյ, էջ 33:

29 Օգտագործում ենք «Սիւնեաց պատմութեան» Մ. Էմինի հրատարակութիւնը (Մոսկվա, 1861), այսուհետեւ՝ *Օրբէլեան*, գլ. ԾԶ, էջ 227-228:

30 *Օրբէլեան*, գլ. ԼԷ, էջ 144:

31 ԱՊ, գիրք Գ, գլ. Ի[ԻԱ], էջ 331: Անհրաժեշտ է նշել, որ «Տրոյ» ընթերցումը տալիս են ԱՊ Ա խմբի ձեռագրերը եւ Բ խմբի bil ենթախմբից Լ-ը (Սանկտ-Պետերբուրգի Արեւելագիտութեան ինստիտուտի ձեռագիրը՝ ընդօրինակուած 1678 թ.: Հարցի մասին մանրամասն տե՛ս Ա. Թակոբեան, Մովսէս Կաղանկատուացու «Աղուանից Պատմութեան» ձեռագրերը. - «Բանբեր Մատենադարանի», N 15, Երեւան, 1986, էջ 110-144): Բ խմբի crv ենթախմբի ձեռագրերը տալիս են «ձորույ» ընթերցումը, որը կարող է լուծել ոչ թէ Տրի, այլ Բերձոր գաւառի յիշատակման հնարատրութիւնը, իսկ b ձեռագիրը (ՄՄ, N 1725) ունի երկու դէպքի համար էլ յարմար «որույ» բառը: Վերջերս Երուսաղէմի պատրիարք. գերաշնորհ Թորոզում արքեպիսկոպոս Մանուկեանի սիրալիր օժանդակութեամբ (որին ակնածանքով յղում են խորին երախտագիտութիւնս) մենք հնարատրութիւն ունեցանք ստանալու ԱՊ i ձեռագրի (Երուսաղէմի Սրբոց Թակոբեանց վանքի Մատենադարանի N 375 գրչագիրը՝ ընդօրինակուած 1685 թ.) համապատասխան էջի լուսանկարը եւ պարզելու, որ այդ ձեռագիրը եւս ունի «որույ» տարբերակը: Ընդհատ, է մանրակրկիտ համեմատութեան արդիւնքում յստակուեց նաեւ, որ i-ն արտագրուած է ուղիղ Լ-ից (ըստ այսմ՝ տուեալ ենթախմբը այսուհետեւ պէտք է անուանել bl: Տեղին նշենք, որ Միսիթարեան Միաբանութեան ընդհանրական արքեպիսկոպոս գերաշնորհ Հ. Յիսա վ. Քիլադպետանի բարեացակամ օժանդակութեամբ ստացած լուսանկարների շնորհիւ մեր կողմից ներկայումս հետազոտուած է նաեւ v1 ձեռագիրը՝ Վենետիկի Միսիթարեան Մատենադարանի N 1485-ը: Այն իրօք անկախ է ենթախմբի c եւ r ձեռագրերից, ինչպէս ենթադրել էինք ժամանակին անողղակի հանգամանքների հիման վրայ): Բայց միեւնոյն է, i ձեռագրում չստանալով «ձորույ» ընթերցման օժանդակող փաստարկ, կարող ենք մեծ հաւանականութեամբ այդ ընթերցումը համարել crv ենթախմբի մայր օրինակի գրչի սխալի արդիւնք եւ վերջնականապէս կանգ առնել «Տրոյ»-ի վրայ:

32 ԱՊ, գիրք Գ, գլ. ԺԹ [Ի], էջ 327:

33 Հմմտ. Ս. Տ. Երեմեան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երեւան, 1963, էջ 70: Համառօտ նշենք, որ հեղինակի մնացեալ կարծիքները Միւս Հարանդ - Միսական-ի Կոտակ համադրութեան եւ վերջինիս առաջացման ժամանակի մասին մեզ թույմ են ոչ բաւականաչափ հիմնատրուած:

Բաց ենք թողնում յղումները այլ չարդարացուած տեսակետների վրայ, որոնցից ամենատարածուածը՝ զարգացած եւ ուշ միջնադարում յաճախ «Փոքր Սիւնիք» (Մար գաւառ) կոչուած տեղանունն հետ համադրելն է եւ դրա հիման վրայ Սիսական-ի Կոտակը Թարթարի վերնահովտում տեղադրելը (վերջին անգամ՝ Սյաւա Սարգսեան, Արցախ. Պատմաաշխարհագրական ճշգրտումներ, Երեւան, 1996, էջ 29-30):

34 *Օրբէլեան*, գլ. ԼԳ, էջ 376; գլ. Ի, էջ 58 («...մինչ յեզր Երասխայ, ի տեղին, որ կոչի Քարաւազ, որ յերիս ճղէ զջորմն»):

35 ԱՊ, գիրք Գ, գլ. ԺԹ [Ի], էջ 327:

36 Օրինակ՝ 1428 թ. մի Աւետարանի յիշատակարանում ունենք. «...ձեռամբ յոգնամեղ եւ փցում գրչի Եղիայի, ... աշխարհաւ յԱղվանից, եւ տեղեալ Դիզակեցի եւ գեղաւ Հատրուդեցի...» (Մ. վրդ. Մարտիրոսեան, Ագուլիսի եւ շրջակայքի ձեռագրերը. - «Արարատ», 1911, էջ 567: ԺԵ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, հատոր Ա, էջ 382-ում վրիպակով՝ «Հաղրուդեցի»): Հայոց ՌԼԳ [1584] թուականի մի ձեռագիր ընդօրինակուած է «[յ]երկիրս Դիզակայ եւ գ[ե]լաղս Հատրուդի, [յ]անապատս որ կոչի Ծախկախ...» (Յուցակ ձեռագրաց Ջմմատի վանքի մատենադարանին. Կազմեց Մ. վ. Քեչիշեան, Վիեննա, 1964, էջ 38: Ծախէն Մկրտչեանի «Լեռնային Ղարաբաղի պատմա-ճարտարապետական յուշարձանները» (Երեւան, 1985), գրքի էջ 134-ում՝ «Հաղրուդի»): Տե՛ս նաեւ Արքանահամ Կրետացի, Պատմութիւն, Քննական բնագիր, ուսերէն թարգմանութիւն, առաջաբան եւ ծանօթագրութիւններ Ն. Կ. Ղորղաւեանի, Երեւան, 1973, գլ. 47, էջ 149 («...գմեծ բարեկենդանն ի միասին արարաք ի Տող եւ ի Հատրուդ եւ զաղուհացից սկիզբն երկուշտաբթի չուեցի ի Հատրուդ գեղէ...»); Մ. Բարխուտարեանց, նշ. աշխ., էջ 68 («Հատրուդ ասան»):

37 *Յովհ. Կարազեղեան*, Սեպագիր տեղանուններ (Այրարատում եւ հարակից նահանգներում), Երեւան, 1998, էջ 170 (հեղինակը ենթադրում է որ Հաղրուդ անունը կարող է ծագած լինել նաեւ բիսիական դիցարանի Աղարութա աստծոյ անունից, որը մեզ թույմ է պակաս հաւանական); *Ծախէն Մկրտչեան*, նշ. աշխ., էջ 134 («միջագետ, կամ բառացի երկու գետերի մէջ»):

38 ԱՊ, գիրք Գ, գլ. ԻԲ[ԻԳ], էջ 340:

39 Այս հարցում հետեւողականօրէն ճիշտ էր Մակար Բարխուտարեանցը (նշ. աշխ., էջ 21):

40 Այս հնչիւնափոխութիւնների մասին տե՛ս *Յովհ. Կարազեղեան*, նշ. աշխ., էջ 131; Գ. Ե. Ժապկյան. Очерки по истории дописьменного периода армянского языка. Ереван, 1967, էջ 170: Ուշ միջնադարում Վ-Բ անցման օրինակ է *Վարանդայի Բրետիս* տարբերակը (Առաքել Դարիժեցի, Գիրք պատմութեամբ, Երեւան, 1990, գլ. Գ, էջ 63), իսկ Կ-Չ անցման օրինակ է *Կոնէն-Չորման* անցումը՝ ենթադրուած Ղեւոնդ Ալիշանի կողմից

(Սիսական. Տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի, Վենետիկ-Ս. Ղազար, 1893, քարտեզ):

41 Նշենք, որ Սամուէլ Կարապետեանը *Բշահիսը* համադրում է *Բճանց* տեղանունն հետ, որը վկայուած է Դադիվանքի մի վիմագրում (*Սամուէլ Կարապետեան*, Հայ մշակոյթի յուշարձանները Խորհրդային Ադրբեջանին բռնակցուած շրջաններում, Երեւան, 1999, էջ 169): Սակայն մեզ համար ակնյայտ է, որ Հակարիի վերնահովտը չէր կարող գտնուել Դադիվանքի իրաւագործեան տակ:

42 Ծ. Մկրտչեան, նշ. աշխ., էջ 126:

43 Ձեռագիրը պահում է Մաշտոցի անուն Մատենադարանում, N 7822, 7823: Օձաբերդի աշտարակի ասանդութիւնը՝ թ. 149բ-154բ:

44 Տե՛ս Հ. Հիւրշման. Հին Հայոց տեղւոյ անունները, Վիեննա, 1907, էջ 353-354; Հ. Ս. Էփրիկեան, Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. Բ, Վենետիկ-Ս. Ղազար, 1907, էջ 186-188; Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան (այսուհետեւ՝ ՀՀՕՏ), հ. 2, Երեւան, 1988, էջ 757-762:

45 Տե՛ս Ե. Կոնդրատեանկոյի քարտեզում (Карта Елисаветпольской губернии с показанием сельских общин..., Тифлис, 1898); ՀՀՕՏ Բառարան, հ. 2, էջ 25:

46 ՀՊՊԿԱ, ֆոնդ 56, գործ 305, թ. 45բ:

47 ՀՊՊԿԱ, ֆոնդ 57, գործ 139, թ. 17բ:

48 ԺԹ դարում շատ յայտնի Ալիդուլի գիւղի հայտնութիւնը բռնագաղթեցուել է մեր դարի սկզբին: Մանրամասն տե՛ս Սամուէլ Կարապետեան, նշ. աշխ., էջ 173-174:

49 Ս. Զալպեանց, նշ. աշխ., հ. Բ, էջ 351: Ուշ միջնադարեան Մաղաւուզ գաւառի մասին տե՛ս Ալեքսան Թակոբեան, Հակարիի վերնահովտի նուրբայտ վիմագրերը, «Հանդէս Ամսօրեայ», 1998 (հրատ. 2000 թ.), էջ 290, 303, 308:

50 Ս. Կարապետեան, նշ. աշխ., էջ 167: Հետեւելով Մակար Բարխուտարեանցի մի տեղեկութեանը՝ հեղինակը Ջառիստը համադրում է Հաշի-Սամ-հեղինակը Ջառիստը համադրում է Հաշի-Սամ-լուի հետ, որն այսօրուայ Վազգէնաշէնն է:

51 ԱՊ, գիրք Գ, գլ. ԺԹ [Ի], էջ 337 (թերուած է սխալներից գերծ Բ խմբի ձեռագրերի ընթերցումը):

52 ՀՀՕՏ Բառարան, հ. 1, էջ 134:

53 Ս. Կարապետեան, նշ. աշխ., էջ 156-157, 179: Հեղինակը Հակարու երկրի հետ է կապում նաեւ Հեղինակը Ջառիստը համադրում է Հայքարայ ձորը (էջ ԺԴ դարում յիշատակուած Հայքարայ ձոր է (ԺԴ 185), որը, սակայն, Կորճայի մի շրջան է (ԺԴ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, կազմեց Լ. Ս. Խաչիկեանը, Երեւան, 1950, էջ 450, 621):

54 ՄՄ, N 7822, թ. 149բ:

55 Թ դարում Բայլականում արարեղեն գրուած մի արժէքատր սկզբնաղբիւր, ցաւօք սրտի, ցալսօք դուրս է մնացել մասնագէտների ուշադրութիւնից (Մասսիսի Մատենադարանի ձեռագրերից, Երեւան, 1990, գլ. Գ, էջ 63), իսկ Կ-Չ անցման օրինակ է *Կոնէն-Չորման* անցումը՝ ենթադրուած Ղեւոնդ Ալիշանի կողմից

ամենայնի Բայլականը չէ, ապա անհրաժեշտ է այն փնտրել Դիզակի նախալեռնային գոտում (գուցէ՛ *Բայլեան*):

56 ԱՊ, գիրք Բ, գլ. Զ, էջ 120-121 («...նշխարք ծածկեալ ի գաւառին Արցախայ, ի Միսանց տոհմին, ի վայրս Կաղսետու: ...սուրբ հայրապետն Արաս... արձակեաց գԴանիել մեծահաստ քահանայն Տրիոյ՝ իրագէտ լինել մեծաւրանց խորհրդոյն»); գիրք Գ, գլ. Ի[ԻԱ], էջ 331 («...արարին վնաս Սիսան, Տրոյ եւ Ամարաս գաւառաց»):

57 Տե՛ս Առաքել Կոստանդեանցի մօտ (ՄՄ, N 7822, թ. 116բ). «Ի վերայ Մանաս գետոյն, որ մահմեդք Քոնդայան կոչեն զգետն»:

58 Հր. Աճառեան, Հայերէն արմատական բառարան, հ. Ա, Երեւան, 1971, էջ 587-588:

59 Հ. Ս. Էփրիկեան, Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. Ա, Վենետիկ-Ս. Ղազար, 1902, էջ 515-530; ՀՀՕՏ Բառարան, հ. 1, Երեւան, 1986, էջ 929-931, 972:

60 Հր. Աճառեան, Հայերէն արմատական բառարան, հ. Դ, Երեւան, 1979, էջ 632:

61 Հր. Աճառեան, Հայերէն արմատական բառարան, հ. Բ, Երեւան, 1973, էջ 50; Թ. Բ. Գամբրելի, Ե. Բ. Իվանով, Индоевропейский язык и индоевропейцы. Т. I-II, Тбилиси, 1984, էջ 217, 845-847: Գետանունների նմանատիպ կառուցուածքի մասին տե՛ս *Յովհ. Կարապետեան*, նշ. աշխ., էջ 30, 109:

62 *Կեր, կերտածք* բառերը իրաւացիօրէն ընկալուած են իբրեւ *կայտածք, ւատտ, իշխանութեան սահման, գաւառ, թեւ* (Հր. Աճառեան, Հայերէն արմատական բառարան, հ. Բ, էջ 576-577; *Սուրէն Աւագեան*, Վիմական արձանագրութիւնների բառարանութիւն, Երեւան, 1976, էջ 265-268): Մեզ թույմ է, թէ մեր վիմագիրը հնարատրութիւն է տալիս որոշ նրբերանգ ընկալել այդ իմաստի մէջ: Ուշագրաւ է, օրինակ, որ հեղինակն ասում է «Կր կերով» Ջառիստի եւ Հակարիի համար, որոնց կողքին հացահատիկի անշրթի, բայց բերքառատ արտեր կան (հիարկէ, Ջառիստի դէպքում մեր ասածը ճիշտ է, եթէ դա Ջառիստն է, ոչ թէ Ջառիստն): Եկեղցաձորի դէպքում, որը կտրտուած, լեռնային մակերեւոյթ ունի, հեղինակը գրում է «Կր սահմանով»: «Կր կերով» չի գրուած նաեւ Քարատնիսի եւ Գոռնանցի դէպքում. արանցից առաջինի տեղը հաստատապէս յայտնի է, եւ այն նոյնպէս լեռնային է: Ուրեմն կարելի է ենթադրել, որ «կեր» տերմինը «կալուածք» իմաստով գոճէ ԺԳ դարում կարող էր նշանակել «հացահատիկի արտ» կալուածքը: Ըստ այսմ՝ կարելի է նմանատիպ «արտ» - «կեր» ենթադրել նաեւ Բէլուկանի եւ Քրդագետի մօտ:

63 ՄՄ, N 7822, թ. 146բ-149ա:

64 Ծ. Մկրտչեան, նշ. աշխ., էջ 125: Հեղինակը արձանագրում է նաեւ «Դայարուց եղեւ, իսկ տեղանքը՝ Եղցուն ձոր: Գիւղատեղի, աներակ մատուով, գտնուած է Խճաբերդից դէպի հիւսիս-ա-








Վիմագրի առաջին շարքի մեջտեղի քարը



Վիմագրի 7-9-րդ տողերի միջնամասը




7-11-րդ տողերի վերջը



Վիմագրի «լուսանցքի» հատուածը




Վիմագրի 11-14-րդ տողերի սկիզբը



Վիմագրի 10-14-րդ տողերի միջնամասը



Վիմագրի 11-14-րդ տողերի վերջը




Խորանի աանդատան դրան պատի արձանագրութիւնը




Խորանի աանդատան դրան պատի արձանագրութեան 9-10-րդ տողերից հատուած



Գաւթի հարաւային որմնափակ խաչքարը



Առաքել վարդապետ Կոստանդեանցի տապանաքարը գաւթում



ՀԱՅՐ ՆԵՐՍԷՍ ԱԿԻՆԵԱՆԻ ՎԻՄԱԳՐԱԳԻՏԱԿԱՆ ՊՐՊՏՈՒՄՆԵՐԸ  
ՉԱԳԻԿ ՍԱՐԳՍԵԱՆ

Մխիթարեան միաբանութեան երեք Հարիւրամեայ տարելիցը Հնարաւորութիւն է ընձեռում ակնածանքի ու գնահատանքի խօսք ուղղել Հայագիտութեան այդ կենտրոնի երեւելի Հայրերի Հասցէին:

Հայր Ներսէս Ակինեանը (1883-1963) Մխիթարեանների վիեննական դպրոցի ռահուիրաններից է, որի գիտական հետաքրքրութիւնները ձեւաւորուել են այնտաքրքրութիւնները ձեւաւորուել են այնպիսի հզօր Հայագէտ անհատների միջավայրում, ինչպիսիք են՝ Հ. Արսէն Այտընեանը, Հ. Գրիգորիս Գալեմքեարեանը, Հ. Գարբիէլ Մենեւիշեանը եւ, վերջապէս, մեծաքանքար Հ. Յակոբոս Տաշեանը:

Ի սկզբանէ ընտրելով քրիստոնեայ Հաւատի սպասաւորի կոչումը՝ նա 1895 թ. ուսումնառում է Վիեննայի Մխիթարեան վարժարանում, որտեղ ստանում է հիմնաւոր գիտելիքներ աստուածաբանութիւնից, փիլիսոփայութիւնից, բանասիրութիւնից, լեզուաբանութիւնից, տիրապետում մի շարք լեզուների:

Քահանայի սքեմը Հազնում է 1907 թ. եւ դառնում միաբանութեան անդամ: Հ. Ն. Ակինեանի Հայագիտական ապագայը ունի գործունէութեան մեծապէս նպաստել են միաբանութեան մատենադարանը եւ միաբանութեան մատենադարանի (1916-1920) եւ «Հանդէս ամսօրեայի» խմբագրապետի (1909-1963) պաշտօնավարումները:

Վիեննայի Մխիթարեանների եւ այլ մատենադարաններում նա ուսումնասիրում է շուրջ 8000 ձեռագիր մատեն, որոնց ընձեռած նիւթը հիմք դարձաւ 500-ից ավելի գիտական աշխատութիւնների համար, որոնցից մօտ 50-ը մենաստեղծմանը, որոնցից մօտ 50-ը մենաստեղծմանը են, մնացեալը յօդուածներ, գրութիւններ են, մնացեալը յօդուածներ, գրախօսականներ, մատենագիտութիւնների

եւ այլն: Բարձր գնահատելով Հ. Ներսէս Ակինեանի գիտական վաստակը՝ Վիեննայի Համալսարանը 1954 թ. դեկտեմբերի 1-ին նրան շնորհում է փիլիսոփայութեան պատուաւոր դոկտորի կոչում:

Հ. Ներսէս Ակինեանի պատմագիտական բազմաբնոյթ աշխատութիւններում իր ոչ մեծ, բայց կարեւոր տեղն են գրաւում Հեղինակի վիճաբանագիտական պրպտումները: Նա անձամբ չի զբաղուել Հաւաքութեամբ կամ նոր վիճաբանի հրապարակմամբ, սակայն գիտակ ու Հասու է եղել հրապարակուած վիճական սկզբնաղբիւրներին եւ մի շարք աշխատութիւններում անդրադարձել է վիճաբանագիտական խնդիրների քննութեանն ու լուսաբանմանը:

1931 թ. Փարիզում Փրանսերէն լեզուով լոյս է տեսնում նշանաւոր Հայագէտ Կարապետ Բասմաշեանի՝ Անիի, Բագնայրի եւ Մարմաշէնի արձանագրութիւնների ժողովածուն: Այս հրապարակմանն անմիջապէս արձագանքում է մեծավաստակ Հայագէտը «Հանդէս ամսօրեայում» տպագրելով մի փոքր գրախօսականը:

Ակինեանը, քաջածանօթ լինելով այդ արձանագրութիւնների նախորդ հրատարակութիւններին՝ Մ. Բրոսէ, Ս. Զալալեանց, Ա. Մխիթարեան, Ղ. Ալիշան, Կ. Կոստանեան եւ ուրիշներ, մատնանշում է Բասմաշեանի ժողովածուի դրական կողմերը. «Անշուշտ Բասմաշեանի տուած ընթերցուածները ունին նախորդներու վրայ ամէն առաւելութիւն: Գովելի է, որ իւր հրատարակութեան կցած է նաեւ կարեւորներու լուսանկարները»<sup>3</sup>: Գրախօսականի սկզբում նշելով նախորդ Հեղինակների սկզբում նշելով նախորդ Հեղինակների